ՈՒՍՏԻԱՆ.– Գնա վրայ՛ տուր թշնամուն… ո՞ւր ես գալիս: Տես ամաններն եմ տանում տեղը դնեմ:

ՆԱՁԱՐ.– Մենակ ո՛ւր ես գնում: Սպասիր հետդ գամ չվախես:

ՈՒՍՏԻԱՆ.– Տե՛ղդ վեր ընկի, տե՛ղդ: (Դուրս է ելնում)։

ՆԱՁԱՐ.– (Հետեւից գնալով) Ո՞նց թէ: Էս գողի, աւազակի տարին ես կնիկմա՞րդ կթողնեմ, որ մենակ դուրս գա տանից: Խալխն իմանա ի՞նչ կասի:

ՈՒՍՏԻԱՆ.– (Ներս է մտնում։)

ՆԱՁԱՐ.– (հետեւում է նրան) Էդպէս: Վախիլ մի: Ես Էստեղ եմ:

ՈՒՍՏԻԱՆ.– (Կրկին ուզում է դուրս ելնել եւ մօտենում է ձախ մուտքին։)

ՆԱՁԱՐ.– (Հետեւում է նրան։ Բայց Ուստիանը միտքը փոխելով ետ է դառնում եւ ինչ-որ բան մտածելով ուզում է փակել դարբասի դուռը։) Ուստիան, բան եմ ասում: Քանի չես քնել մի դուռը բաց պահի, լուս արա, գնամ ախոռը տեսնեմ իշի առջեւ գարի կա՞յ:

ՈՒՍՏԻԱՆ.– (Դժկամ կատարում է խնդիրքը։)

ՆԱՁԱՐ.– (Դուրս է ելնում։ Դրսից լսւում է նրա խօսքերը) Դուռը չփակես, Էդտեղ կաց: (Քիչ աւելի հեռուից) Էս էշի առջեւ գարի չկա՞յ, ի՞նչ է, (Միջոց) Վախի՛լ մի, ես էստեղ եմ: (Լռութիւն։ Լուսինը դուրս է գալիս) Լուսնակը դուրս եկաւ: (Միջոց) Կնիկ, ի՞նչ քարուան կտրելու գիշեր է: Դե՛սը բեր զէնքերս, գնամ Դաղստանու խանի քարուանը կտրեմ բերեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– (Արհամարհանքով) Դէ, քի՛թդ սրբի, ծակո՛ւռդ մտի, քեզնից քարուան կտրող դուրս չի գայ:

ՆԱՁԱՐ.– Ա՛յ կնիկ, համբերութիւնից մի՛ հանի, քեզ ասում եմ, զէնքերս բեր գնամ քարուանը կտրեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– Սա որ էսպէս խօսքի տակ չի մնում, էն հերսիցս ուտում եմ ինձ… (Վճռական) Քարուա՞ն ես ուղում կտրել:

ՆԱՁԱՐ.– Բա Ի՞նչ: Շան կնիկ, ինչի՞ չես թողնում գնամ քարուան կտրեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– Էլ հերիք եղաւ, քո մարդ ասողի հերն անիծած: (ներս մտնելով եւ. դուռը փակելով) Դէ գնա քարուան կտրի:

ՆԱՁԱՐ.– Վա՛հ, վա՛հ, վա՛հ, դո՛ւռը, դո՛ւռը, ի՞նչ ես անում:

ՈՒՍՏԻԱՆ.– Ռա՛դ եղի: Քեզ հետ ապրելու սիրտ չունեմ:

ՆԱՁԱՐ.– Դուռը բաց արա, թէ չէ կջարդեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– (Լռում է։)

ՆԱՁԱՐ.– Բաց արա դուռը, չեմ ծեծի:

ՈՒՍՏԻԱՆ.– Դո՛ւ ես ծեծողը: Կրեմ գլուխդ: (Լռութիւն։)